Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 4-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան
«04» մայիս 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

1. Սույն ընթացակարգը վերաբերում է Գավառի պետական համալսարանում /այսուհետ՝ Համալսարան/ սովորողների ակադեմիական ինտեգրումը խթանող գործընթացներին:
2. Ակադեմիական ինտեգրումը ներառում է առկա և հեռակա ուսուցման համակարգերում, կրթական բոլոր աստիճաններում սովորողների ներգրավումը ուսումնական, գիտահետազոտական գործընթացներին:
3. Ակադեմիական ինտեգրումը վերաբերում է սովորողների մասնակցությանը մասնագիտական կրթական ծրագրերի բոլոր կառուցամասերի իրականացմանը:
4. Համալսարանում ակադեմիական ինտեգրմանը նպաստող կառուցակարգերն են.
   1) Համալսարան-ուսանող պայմանագրի կնքումը,
   2) «1-ին կուրսեցու ուղեցույցի» տրամադրումը,
   3) համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողի ուղեցույցի տրամադրումը,
   4) սովորողների հետ անհատական և կոլեկտիվ բացատրական աշխատանքների կատարումը,
   5) կուրսղեկների և խորհրդատուների աշխատանքի արդյունավետության բարձրացումը,
   6) բազմաբնույթ միջոցառումների իրականացումը,
   7) սովորողներին կանոնավոր տեղեկությունների տրամադրումը,
   8) մասնագիտական ամբիոնների կողմից լրացուցիչ մասնագիտական օժանդակության ցուցաբերումը,
   9) ուսուցման կրեդիտային համակարգի սկզբունքների վերաբերյալ և այլ կրթական հարցերի շուրջ խորհրդատվությունների կազմակերպումը,
   10) հարցումների անցկացումը,
   11) հետադարձ կապի ապահովման տարբեր կառուցակարգերի կիրառումը:
5. Համալսարանը հրատարակում և դիմորդներին ու ուսանողներին հասանելի է դարձնում տեղեկագիրքը, որը ներառում է տեղեկատվություն Համալսարանի առաքելության,

ընդունելության պայմանների և ընթացակարգերի, ուսանողների իրավունքների ու պարտականությունների, ուսումնառության կարգի, կրթական ծրագրերի և դրանց ավարտական պահանջների, առանձին դասընթացների, ուսման վարձավճարների, տեղերի, հաճախումների և բուհից ազատման և այլ դրույթների վերաբերյալ:

6. Համալսարանը հրատարակում և ուսանողներին է տրամադրում ուսանողի ուղեցույցը, որը պարունակում է տեղեկատվություն ուսանողների իրավունքների և պարտականությունների, վարքի, ակադեմիական ազնվության կանոնների, բողոքարկումների կարգի, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, ուսանողական այլ կազմակերպությունների ու ծառայությունների, ուսանողներին ֆինանսական օգնության, համագործակից համալսարանների ցանկի և բուհի ընձեռած այլ հնարավորությունների վերաբերյալ:

7. Համալսարանը ներքին ինտեգրումից բացի խրախուսում է սովորողների և դասախոսների արտաքին ակադեմիական ինտեգրումը՝ պետության և արտերկրի այլ բուհերում ուսումնառության և աշխատանքային գործունեության որոշակի մասի կազմակերպման, դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունակության ապահովման տարբեր ձևերով:

8. Ուսանողներին կանոնավոր տեղեկությունների տրամադրման, խորհրդատվության մատուցման և լրացուցիչ աջակցության կազմակերպման գործառույթներն իրականացնում են կուրսղեկները, համապատասխան մասնագիտության գծով ուսումնական խորհրդատուները, դասախոսները, ամբիոնները, դեկանատները, Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումները:

9. Հետադարձ կապի ապահովման գործառույթներն իրականացնում են Համալսարանի ռեկտորատը, ակադեմիական քաղաքականության բաժինը, դեկանատները, ամբիոնները, այլ կառուցվածքային ստորաբաժանումները: